# Կյանքին համընթաց



Համագումարի նախօրեին բացված ցուցահանդեսներում կան առավելապես երիտասարդ նկարիչների վերջին երեք տարում ստեղծած մի շարք կտավներ:

Մենք սովոր ենք, որ դրանք տեղ են գտել մեր ավագ ընկերների, կերպարվեստի վարպետների գործերի կողքին:

Վերջին տարիներին ասպարեզ են մտել մի խումբ երիտասարդ նկարիչներ, որոնք ջանք չեն խնայում կատարելագործել իրենց արվեստը, գտնել արտահայտչականության նոր, առաջավոր ձևեր: Նման օրինակներ են մեզ տալիս ռեսպուբլիկայի ճանաչված վարպետները, որոնց թիվը քիչ չէ:

Խորապես համոզված եմ, որ համագումարը երիտասարդներիս առջև նոր ուղի կբացի՝ ստեղծագործական ճիշտ ուղի, կնշի այն ամենը, որը պետք է հանդիսանա մեր հետագա աշխատանքի հիմնաքարը:

Իմ կարծիքով համագումարը ամբողջ սրությամբ կբարձրացնի արդիականության, կոմունիզմի կառուցող մարդու կերպարի ստեղծման հարցերը: Չէ՞ որ արվեստի ուժը ժամանակի հետ համընթաց քայլելու մեջ է:

Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վիեննայում կայացած 7-րդ համաշխարհային երիտասարդական ֆեստիվալի խուրեստ

# ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ

